Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Ներքին աուդիտի բաժնի պետ (ծածկագիր՝ 89-2.2-19)

1) ապահովում է ներքին աուդիտի կանոնակարգի նախագծի, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի կազմումը և ներկայացնում Հանձնաժողովի նախագահին ու ներքին աուդիտի կոմիտեին.

2) յուրաքանչյուր աուդիտի համար մշակում և սահմանում է առաջադրանք՝ նշելով դրա իրականացման շրջանակը, խնդիրները, տևողությունը և տրամադրված ռեսուրսները, աուդիտի մոտեցումներն ու տեխնիկան, աուդիտի տեսակն ու ծավալը.

3) կատարում է իրականացման ենթակա աուդիտորական առաջադրանքների բաժանում ներքին աուդիտորների միջև.

4) ապահովում է աուդիտի ավարտից հետո հաշվետվության կազմումը՝ նախապես քննարկելով աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ, և տրամադրում Հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին.

5) հետևում է ներքին աուդիտի իրականացման տարեկան ծրագրի իրականացմանը.

6) կազմում և Հանձնաժողովի նախագահին ու ներքին աուդիտի կոմիտեին է ներկայացնում ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը.

7) անհրաժեշտության դեպքում, խորհրդակցելով լիազոր մարմնի հետ, ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համար մշակում է առանձին մեթոդաբանություն.

8) Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է զեկուցումներ աուդիտի իրականացման սահմանափակումների՝ խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ.

9) ընթացիկ ուսումնասիրությունների՝ ներքին գնահատումների միջոցով իրականացնում է աուդիտի որակի երաշխավորման ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաեւ արտաքին խորհրդատուների.

10) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ապահովում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ մշակելը.

11) Հանձնաժողովի նախագահին հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.

12) Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, Հանձնաժողովի նախագահի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների.

2. Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն.

քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ եւ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան եւ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչեւ

2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, “Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին”, “Քաղաքացիական ծառայության մասին” “Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին”, “Ներքին աուդիտի մասին”, “Գնումների մասին”, “Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի “Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման, “Ներքին աուդիտի մասին”, Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N503-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” N1233-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի “Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները հաստատելու մասին” N 974-Ն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի “Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին” N 165-Ն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի “Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին”, N 143-Ն հրամանների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

բավարարում է “Ներքին աուդիտի մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով սահմանված պահանջները.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն։

3. Թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետը՝

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի կողմից նշանակում կատարվելը.

4. Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է՝

,04ե ,հունիսիե 2019թ.

5. Աշխատավարձի չափը՝

Երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք (256623) դրամի չափով.

6. Աշխատանքի վայրը, հեռախոսահամարները՝

ք.Երևան, Սարյան 22, հեռ.52-53-40-108,118

7. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն դիմում, տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին,

մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

անձնագրի, հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) պատճենները։

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 10^{00}-ից մինչև 12^{30}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից։

Փաստաթղթերը ներկայացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ (Երևան, Սարյան22, հեռ. 52-53-40-108,118)։